

պանատունը եկան՝ Մեծ իշխաններ Նիկոլայ Նիկոլաևիչ և առաջը և Սերգեյ Միխայլովիչ, պրինց Օլգենբուրգսկի, արտաքին գործերի մինիստրը, ամբողջ դիպլոմատական խումբը և բարձր հասարակության պատկանող անձինքը:

Վիեննա, 20 յունվարի: Մեյերլինդի ամբողջ այն սենեակը, ուր վաղաժամկետ է թաղաժառանգը, կահավորված է շատ հասարակ կերպով: Այն մահակալը, որի վրա մեռել է թաղաժառանգը, շինած է հասարակ ընկուղի փայտից, մահակալի գլխին՝ արծաթեայ շրջանակում՝ կահաված է թաղաժառանգի Ստեֆանիայի պատկերը: զրահները վրա դրած են՝ ակվարելներ, դրեք, յատակագծեր, և երկու դեռ չը բացված նամակներ: Պալատական աստիճանադրները՝ Վիեննայից գալուց անմիջապես ձեռնարկեցին արձանագրություն կազմելուն: Թղթերը և նամակները կնքեցին: Պալատական քահանայ Մեյեր օրհնեց հանգուցեալի մարմինը: Հանգուցեալի դեմքը բոլորովին չէ փոխվել:

Վիեննա, 20 յունվարի: Թաղաժառանգի թաղումը տեղի կունենայ, եթե այդ մասին լինի կայսրի բարեհաճությունը: Երեքշաբթի օր, կեսօրից յետոյ ժամը 4-ին: Կայսրը, ինչպես ասում են, ցանկություն է յայտնել, որ թաղաժառանգի թաղումը հասարակ կատարվի Յուդարկաբուրգի հանգեղանք ամենակարճ ճանապարհով կը դիմե դեպի կապուցյանները եկեղեցին, որի դամբարանում և կը թաղվի մարմինը: Կիրակի օր թաղաժառանգի մարմինը իր նշարանից կը տեղափոխվի եկեղեցին, երկուշաբթի օր եկեղեցին բաց կը լինի ժողովրդի համար: Փաղաքի ներսի մասի գլխավոր փողոցները սղառված են: Տեղական թղթագրությունները մեկի տեղեկություններին նայելով, թաղաժառանգի մարմինը դնուկունը և զմուռնը տեղի է ունեցել այսօր առաւօտեան:

ՓԱՐԻՅ, 20 յունվարի: Պատգամաւորների ժողովը 300 ձայների առաւելութեամբ ընդդէմ 240-ի հաստատեց Ֆլոկէի մինիստրությունը ուղղած հաւատարմութեան արտայայտությունը:

Վիեննա, 20 յունվարի: «Wiener Zeitung» լրագրի մէջ տպած պաշտօնական լուրը, թէ թաղաժառանգը ինքնասպանութիւն է գործել, ատրճանակ արձակելով դէմքին, հաստատուում է: Ինքնասպանութեան մասին լուրեր պտտում էին քաղաքում դեռ երէկ. բայց այդ մասին լրագրի հետ հետաքննարկելու արգելված էր: Գեռանցեալ տարի թաղաժառանգը թուրքի մի քանի անգամ ասել էր իր մօտիկ անձանց իր մահվան մօտ լինելու մասին. այդ մասին նա գլխաւորապէս ասել էր կոմս Վիլհելմին և Գոյսին: Թաղաժառանգը թողել է մի գրութիւն, որով յանձնարարում է պաշտօնեայ Սեզենին՝ կարգի բերել իրանից յետոյ մնացած թղթերը: Երէկ բժիշկները ապացուցին, որ ինքնասպանութիւնը տեղի է ունեցել: Կայսր Ֆրանց-Յովսէփ հրաւիրեց իր մօտ կոմս Տաաֆէին և Տիսային: Վերջինները խորհուրդ տուցին նրան հրատարակել այդ փաստը: Պալատը մերժեց օտար անձինքների մասնակցութիւնը թաղաժառանգի թաղման հանդիսում:

Վիեննա, 20 յունվարի: Թաղաժառանգի մարմինը զննելը սկսվել է երէկ, երեկոյան 9 ժամին: Զննելուն մասնակցելու համար հրաւիրված էին անատոմիական ինստիտուտի կառավարիչը, պրոֆեսոր Կոնդրատ, էլքեր-Բիլկեր Վիլհելմ և Ստեֆան, այլ և պալատական յանձնաժողովը: Զննելը աւարտվեց կէս դիւրերիս Ապա մարմինը տեղափոխվեց սեղանատան մեծ դահլիճ և տեղաւորվեց այնտեղ ամպօլմանի վրա: Էրցհերցոգ թուրքի դեռ երկու տարի սրանից առաջ նոյնպէս և մահվանից մի շաբաթ առաջ յանձնարարել է պաշտօնեայ Սեզենին կարգի բերել իր թղթերը:

Վիեննա, 20 յունվարի: Անցեալ օրը, առաւօտեան, սենեկապետ Գոչէկ, նախընթաց երեկոյեան թաղաժառանգից ստացած հրամանի համաձայն, արթնացրեց նորին բարձրութիւնը և տուեց նրան ստացված նամակները: Թաղաժառանգը հրամայեց Գոչէկին պատրաստութիւններ տեսնել որսի համար, որի պատճառով և Գոչէկ տանից դուրս գնաց: Ուրիշ սպասաւորներ չը կային: Վերադառնալով Գոչէկ շատ զարմացաւ, տեսնելով որ թաղաժառանգի նշարանի դուռը փակ է, և սկսեց պինդ բաղախել, բայց որովհետեւ նա սկսեց կասկածել, որ տանը մի որ և է դրժբարդութիւն է պատահել, ուստի կանչեց որսի

համար եկած հիւրերին: Գուռը կտրեցին և տեսան, որ թաղաժառանգը ինքնասպանութիւն է գործել:

Վիեննա, 20 յունվարի: Զեռնարկելով թաղաժառանգի մարմինը զննելուն, Վիլհելմ-Ֆէր նկատեց հանգուցեալի գլխի վրա մի մեծ վէրք, անկողնի աջ կողմում, էրցհերցոգի ձեռքի մօտ, ընկած էր դատարկված բեղովէրը: Այդ գրութիւնը անկասկածելի է դարձնում, որ էրցհերցոգ թուրքի իրան սպանել է իր սեփական ձեռքով:

Վիեննա, 21 յունվարի: Լրագրիները էրցհերցոգ թուրքի ինքնասպանութեան շարժառիթները անհասկանալի են համարում: Ազգայնականութիւնը թաղաժառանգի ինքնասպանութեան վերաբերեալ պաշտօնական տեղեկութեանը վերաբերում է կասկածանքով: Այն սենեակում, ուր մեռել է թաղաժառանգը, գտել են նրա մի նամակը՝ կայսրուհու անունով: Թաղման ներկայ կը լինի միայն բելգիական թաղաժառանգի ղոյզը: Աւստրիական արքունիքը խնդրել է թաղման ներկայ լինելու համար ղեկավարական պատգամաւորութիւններ չուղարկել, ի բաց առնելով այն գնդերի հրամանատարներին, որոնց չէֆ է եղել հանգուցեալը: Ֆրանց-Յովսէփ կայսրը ստանում է ամեն կողմերից՝ յատկապէս իրան ուղղած հեռագրերով՝ ամենազգացված ցաւակցութեան արտայայտություններ: Բժիշկների եղբայրացութեամբ թաղաժառանգը թուրքի ինքնասպանութիւն է գործել խելացիոր գրութիւնն ժամանակի 10-ի-0-ի, 21 յունվարի: Էրցհերցոգ թուրքի գլխ է մի նամակ իր ծնողին, և այդ նամակը պարզում է դժբաղդութեան իսկական պատճառները: Էրցհերցոգ կարլ-Լուդվիգ հրաժարվեց աւստրիական զանի վրա իր ունեցած իրաւունքներից՝ իր մեծ որդու օգտին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 22 յունվարի: Բարձրագոյն պալատում սուգ է նշանակված երկու շաբաթով, աւստրիական թաղաժառանգը էրցհերցոգ թուրքի մահվան առիթով: «Гражданин» լրագիրը հաղորդում է, որ Կայսերական գնացքի խորհրդման գործի ամբողջ քննութիւնը դաւնում է արդարադատութեան մինիստրի մօտ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ	
Յունվարի 20-ին	
Ընդունի վրա 10 ֆունտ արծեւ . . .	94 ր. 15 >
Համբուրգի վրա 100 մարկ . . .	46 > 15 >
Փարիզի վրա 100 ֆրանկ . . .	37 > 20 >
Ուկր . . .	7 > 55 >
Մարտային կուպոններ . . .	151 > 25 >
Ամսաթիւ . . .	1 > 14 >
Բորսային դիսկոնտներ . . .	6 1/2 > 7 1/2 > 0 >
Պետական բանկ. 5% 1-ին շրջան . . .	98 > 50 >
— 2-րդ . . .	98 > 25 >
— 3-րդ . . .	97 > 50 >
— 4-րդ . . .	97 > 87 >
— 5-րդ . . .	97 > 87 >
Ոսկեայ փոխառութիւն . . .	139 > — >
Նոր 4% փոխառութիւն . . .	83 > 25 >
Արեւելեան 5% փոխառութիւն. 1-ին շրջ. . .	98 > 25 >
— 2-րդ . . .	98 > 25 >
— 3-րդ . . .	99 > 75 >
Ներքին 5% առաջին փոխառութիւն . . .	265 > 75 >
— երկրորդ . . .	248 > 25 >
5 1/2% րէնտա . . .	102 > — >
Ոսկեայ րէնտա . . .	169 > — >
Եթերը կոնսոլիդաց փոխառութիւն . . .	147 > — >
Նոր երկաթուղային րէնտա . . .	98 > 37 >
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մեռ. . .	— > — >
— Եթեր . . .	91 > 50 >
Գրաւ. թղ. Ազն. բանկի . . .	98 > — >
5 1/2% գրաւական թղթեր Խերսոնի կալուած բանկի . . .	97 > 62 >
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան. . .	100 > 75 >
— Պոլտավայի . . .	100 > 50 >
— Պետ. Տոլուկ . . .	100 > 25 >
— Կիւբի . . .	101 > — >
— Մոսկովայի . . .	100 > 25 >
— Բեսարաբ. Տալի . . .	99 > 75 >
— Նիժ. Սամար . . .	100 > 37 >
— Վիլնայի . . .	99 > 37 >
— Թիֆլիսի—72 և — տ. . .	— > — >
— Փոլիսայի—18 և — տ. . .	— > — >
Վոլոկո-Կամսկի բանկի ակցիաները 681 >	
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 233 >	
Ռիբնիկ-Բոլոգոյի ընկ. . .	85 > 75 >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրէկ-գալիաներ . . .	93 > 75 >
Մոսկովայի քաղաք. օրէկագիւններ . . .	92 > 50 >
Օգէսայի . . .	93 > 75 >
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրէկ. . .	— > — >
Ս. Պետերբուրգի բորսայի արաւարտութիւնը ամուր է:	

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր

Ներկայ 1889 թ.ի, յունվարի 22-ից, կիրակի օրից սկսած, ամենակարճ ժամանակով, ԹԻՖԼԻՍՈՒՄ, ԳՕՐՈՎՆԻՍԿԻ պրոսպեկտի վրա, Միրզոբի (Նախկին Բէրօի) տանը, ամեն օր, ժամը 12-ից մինչև 10 ժամ երեկոյեան, ցոյց կը տրվի միջառ հազուադիւս երեւոյթ, այն է

ՀՈԶԱԿԱՒՈՐ ԳՈՒՇԱԿՈՂ ԱՄԵՐԻԿՈՒՀԻՆ
ամենամեծ ՀՍԿԱՅ ՏԻԿԻՆ ամբողջ եւրոպայում

1—1

САРПИНКА. | Приемъ заказовъ и пересылка во все города Россіи и за-границу. | СЕЗОНЪ 1889 Г.

собственной выработки САРПИНСКІЯ ИЗДѢЛІИ ручнаго ткачества родъ зефира, для лѣта на дамскія платья, дѣтскіе костюмы и мужскія сорочки. Отлично моются.

Цѣны отъ 15 до 22 копѣекъ, за аршинъ.

ОГРОМНАЯ КОЛЛЕКЦІЯ НОВѢЙШИХЪ ОБРАЗЦОВЪ

высылается заказной бандеролью въ альбомѣ за 42 и въ конвертѣ за 28 копѣекъ почтовыми марками. Цѣны и условія при образцахъ.

Адресъ: Саратовъ. "Товариществу промышленниковъ сарпинскихъ издѣлій."

СЕЗОНЪ 1889 Г. | ПРОДАЖА ШТУКАМИ и АРШИНАМИ. | САРПИНКА.

5—5 (10 և 25)

DEUXIÈME ANNÉE

REVUE

DEUXIÈME ANNÉE

COMMERCIALE ET INDUSTRIELLE

DU CAUCASE

RÉDIGÉE EN LANGUE FRANÇAISE ET RUSSE

ET PARAISSANT A TIFLIS LE 1^{er} ET LE 15 DE CHAQUE MOIS

Directeur: J. MOURIER

PRIX DE L'ABONNEMENT: Six Mois, 7 fr. 50 (3 roubles); Un An, 15 fr. (6 r.).

ԳՈՐԾԱՐԱՆ

ԱՐՈՒՆՍԱԿԱՆ, ՄԻՆԵՐԱԿԱՆ, ՄՐԳԱՅԻՆ ԵՒ ԳԱԶԱՅԻՆ ԶԻՐԻՒ

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑԻ

ԲԱԹՈՒՄՈՒՄ

(Ցերկովնայա փողոցում, Կոնստանտինովի տան կից, որտեղ գտնվում է Լօբի և ընկ. տպարանը)

Պատիւ ունեմ յայտնելու պ.պ. բժիշկներին և յարգելի հասարակութեանը որ ես նորից վերա նորոգեցի և նշանաւոր կերպով ընդարձակեցի իմ գործարանս, աշխատելով բաւականացնել ԺԱՄԱ ՆԱԿԱԿԻՑ ԳԻՏՈՒԹԵԱՆ բոլոր ՊԱԶԱՆԶՆԵՐԻՆ, ջրերի պատրաստութեան վերաբերմամբ:

Գործարանի կառավարութիւնը ես յանձնեցի ՖԱՐՄԱՅԻՍԻ մի ՊՐՈՎԻԶՈՐԻ, որ փորձառու թիւն է ստացել Ռուսաստանի մայրաքաղաքներում: Գործարանն ունի ամենանոր ձեռք մեքենաներ, նոյնպէս և ԶԻՎԻՆԻ հաշակաւոր ՖԻԼՏՐ, որը միակ է, որ պնդութեամբ մօտեցնում է ջրերը կապարից, կրից, երկաթից, օրգանական, միներալական մասնիկներից ու աղերից և դերաղանցում է բոլոր միւս ֆիլտրներից իմ մեքենայական և քիմիական գործողութեամբ:

Պրովիզորը մշտապէս գտնվում է և անձամբ պարապում է իմ գործարանում: Դնորով այն օժանդակ միջոցներ, որ առաջին է գիտութիւնը անալիտիկական քիմիայի ճիշդում, այսուհետեւ իմ գործարանում կը պատրաստվեն, բացի զէտեքեան, մրգային և գաղային ջրերից, բոլոր ՄԻՆԵՐԱԿԱՆ ԲՈՇԿԱԿԱՆ ԶԻՐԵՐ, ինչպէս օրինակ՝ ՎԻԼԻՒ, ԼՈՒԿ, Կարսաղի, Մարիէնաղի ջրերը, լուծողական ջրերը բոլոր յայտնի աղբիւրների և այլն, հետեւելով յայտնի հետազոտողների առած կահունքներին: Արուեստական միներալական ջրերը, որոնք այժմ խորհուրդ են տալիս ընդունել հաշակաւոր բժիշկներից, կարող են ոչ թէ միայն փոխարինել բնական ջրերին, բայց և ունեն մի քանի դերաղանցութիւններ: Նրանք կարող են միշտ թաղման մէջ ձեռք բերվել, մի և նոյն ժամանակ պարունակելով օրոնց մէջ անխաթմու գաղբի անկի մեծ քանակութիւն, այդպիսով անելի ախտերի դառնալով խանգարում համար և անելի շուտ ներգործելով հիւանդ կազմուածքի վրա:

Աւելորդ չեմ համարում ասել որ ես միշտ աշխատում եմ պահել գործարանս կատարեալ մաքրութեան մէջ և վերաբերվել զէպի գործն ամենամեծ ճշգրտութեամբ և բարեխղճութեամբ, որի մասին յարգելի հասարակութիւնը կարող է համոզվել անձամբ այցելելով գործարանս ամեն ժամանակ:

Տարածաշրջաններից խուսափելու համար, խոնարհաբար խնդրում եմ իմ ջրերի գործածող երկն պահանջել որ իմ բոլոր արդիւնքները կրեն իմ ֆիրմայի նշանակը, քանի որ ուրիշ գործարաններ կարող են ի չար գործածել հասարակութեան հաւատարմութիւնը:

Մ. ՄԻՀՐԱՆԵԱՆՑ 50—50 (b)

ՄԻՀԱՄԵՍ ՆԱԿԱԿԻՑ ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ԳԻՏՈՒԹԻՒՄ Լ ԿԻՏԱԳԻՆԵ

ԲՈՒԹԻՒՄ 8-ից մինչև 13 տարեկան երեխաներ:

Հարցնել վանքի փողոց Լ 5.

7—10 (b. 2.)

ВЪ ЖИРАРДОВСКОМЪ СКЛАДѢ

Тифлисъ, Дворцоваѣ ул., КАРАВАНСАРАЙ БЫВШІЙ АРЦУРНИ.

ԺԻՐԱՐԴԵԱՆ ՊԱԶԵՍ

Դժբոգվայա փողոց ՆԱԿԻՆ ԱՐԵՐՈՒՆՈՒ քարավանատարայում

Ստացված են

ՊԱՏՐԱՍ ԲԵԶԵՆՏԵՐ ամեն տեսակ չափերի

7—10 (2)

ԴՈՆԵՐ և ԼԵՑՑ

Բացված է բաժանորդագրութիւն **ԲԱԶՄԱՎԷՊ** հանդիսարանի

47-որդ տարի 1889 Վենետիկ Ս. Ղազար

առաջիկայ 1889 տարւոյ (հաղմովէպ) հանդիսարան ուսումնասիրել փոխանակ եռամսեայ լինելու, ամեն ամսոյ սկիզբը երկերկու ութամս թերթիկ ի լոյս պիտի ընծայուի: Տարեկան գինն է 10 ֆրանք. Ռուսաստանի համար 4 րուբլի ճանապարհի ծախքով. բաժանորդ գրուել ցանկացողը կարող են զմեզ ուղղակի խմբագրութեան. Venice, au couvent. P. P. Mekhitaristes, S. Lazare. կամ առ գործակալ մեր օր Տիֆլիս պ. Յովսէփ Զախարայեան:

Խմբագրութիւն (հաղմովէպ) հանդիսարանի

3—5